

11.02.2011թ.

գ. Ազատ

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 21.01.2011թ. թիվ 5-Ա կարգադրությունը՝ հանձնաժողովը նախագահությամբ Ի. Ասատրյանի, անդամությամբ Յու. Թաթարյանի, Ա. Գասպարյանի, Հ. Օհանյանի, Վ. Մնացականյանի, Վ. Պողոսյանի, մասնակցությամբ մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մասնագետ Ա. Զարոյանի, վարչական հսկողության շրջանակներում ուսումնասիրեց մարզի Ազատ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի /Կարինե Մելիքյան աշխատում է 2007թ. սեպտեմբերից/ գործունեությունը 2009-2010թթ. ընթացքում:

Ուսումնասիրվեցին ներքոհիշյալ բնագավառները՝

1. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը իրավական ակտերի ընդունման և դրանց օրինականության բնագավառ

2009թ. համայնքի ավագանին գումարել է 10 նիստ, ընդունելով 16 որոշում

2010թ. – 10 նիստ՝ 11 որոշում

2011թ. – 0 նիստ՝ 0- որոշում

Համայնքի ղեկավարը ընդունել է որոշումներ՝

2009թ. – 25

2010թ. – 33

2011թ. – 0

Արձակել է կարգադրություններ՝ 2009թ.՝ 25, 2010թ.՝ 19-ը, 2011թ. կարգադրություններ չեն արվել:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը արձակել է հրամաններ՝ 2010թ. – 1-ը, 2011թ. դեռ չի ընդունվել:

Համայնքի ավագանու 2009թ. հունվարի 15-ի թիվ 1 նիստում հաստատվել է համայնքի 2009թ. բյուջեն, հողի հարկի և հողի վարձավճարների պարտքերի գանձման ժամանակացույցը և աշխատավարձերի ապառքների վճարման ժամանակացույցը:

12.02.2009թ. թիվ 2 նիստում հանձնարարվել է համայնքի ղեկավարին հողի հարկերը վճարող իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ ձեռնարկել վարչական միջոցներ 28.02.2009թ. թիվ 3 նիստում լսվել է համայնքի 2008թ. բյուջեի կատարողականի հաշվետվությունը:

02.05.2009թ. թիվ 5 նիստում լսվել է համայնքի ղեկավարի, նրա աշխատակազմի աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը նվազեցնելու մասին հարցը:

09.09.2009թ. թիվ 7 նիստում լսվել է գյուղապետարանում շտաբային ուսումնական վարժություն անցկացնելու մասին հարցը նույն թվականի թիվ 6, թիվ 8 նիստերում, լսվել է բյուջեի 2-րդ և 3-րդ եռամսյակների կատարողականի հարցերը:

12.12.2009թ. թիվ 9 նիստում լսվել է 2009թ. բյուջեի կատարման ընթացքի մասին հարցը:

15.12.2009թ. թիվ 20 նիստում հաստատվել է համայնքի 2010թ. բյուջեն:

2009թ. բյուջեի կատարողականի հաշվետվությունը լսվել է ավագանու 28.02.2010թ. թիվ 1 նիստում:

14.05.2010թ. թիվ 3 նիստում լսվել է «Համայնքային միություն» և «Միջհամայնքային միավորում»-ներին անդամակցելու, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին հարցերը:

17.05.2010թ. թիվ 4 նիստում փոփոխություն է կատարվել համայնքի ղեկավարի աշխատավարձի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնական դրույքաչափերի մեջ:

14.07.2010թ. թիվ 6 նիստում լսվել է համայնքի բյուջեի 2010թ. 2-րդ եռամսյակի կատարման մասին հարցը, որտեղ հանձնարարվել է համայնքի ղեկավարին աշխատանքներ տանել 2010թ. բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, իսկ 14.10.2010թ. թիվ 8 նիստում լսվել է համայնքի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացի մասին հարցը:

28.12.2010թ. թիվ 10 նիստում հաստատվել է համայնքի 2011թ. բյուջեն:

2011թ. անցած ժամանակաշրջանում ավագանու նիստ դեռևս չի գումարվել /ըստ աշխատակազմի քարտուղարի այն գումարվելու է մոտ ժամանակներս/, որտեղ հաստատվել է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի հաստիքացուցակը և դրույքաչափերը:

Համայնքի ղեկավարը հիմք ընդունելով ավագանու 15.01.2009թ. թիվ 1 նիստի որոշումը՝ իր 15.01.2009թ. թիվ 62 որոշմամբ հաստատել է համայնքի բյուջեն, որի իրավասությունը ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի համայնքի ավագանուն է:

08.12.2010թ. թիվ 31 որոշմամբ գյուղապետը ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով /նշված չէ օրենքի որևէ հոդված/ հանձնարարել է իր տեղակալին ձմռանը ճանապարհները մաքրելու համար պայմանագիր կնքել տեխնիկա ունեցող որևէ քաղաքացու հետ:

Քանի որ նման հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ոչ թե «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ուստի սույն որոշումն չունի իրավական ուժ, հետևապես այն պետք է ուժը կորցրած ճանաչել, նույնը՝ 15.05.2010թ. թիվ 15 որոշումը, չեղյալ պետք է համարել նաև գյուղապետի 18.05.2010թ. թիվ 11 կարգադրությունը:

Հետևապես ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին ենթակետի «բ» պարբերության դրույթներով համայնքի ղեկավարը պետք է ուժը կորցրած ճանաչի իր 15.01.2009թ. թիվ 62, 15.05.2010թ. թիվ 15, 08.12.2010թ. թիվ 31 որոշումները և 18.05.2010թ. թիվ 11 կարգադրությունը, /յուրաքանչյուր իրավական ակտը ուժը կորցրած է ճանաչվում համապատասխան ակտով/: Համայնքի ղեկավարի 28.12.2009թ. թիվ 83, 30.12.2010թ. թիվ 32 որոշումներով, ինչպես նաև 18.05.2010թ. թիվ 10 կարգադրությամբ ստեղծվել են անասնազխաքանակի, թռչունների, մեղվաընտանիքների գույքագրումների հանձնաժողովներ, սակայն որևէ գույքագրման արդյունք չի հաստատվել ավագանու նիստով, որով իսկ չի կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջները, ինչպես նաև չեն անցկացվել համայնքի սեփականության ամենամյա գույքագրումներ:

Ազատ համայնքի ավագանին ընտրվել է 2010թ. փետրվարին, սակայն այսօրվա դրությամբ դեռ չի հաստատել նորընտիր ավագանու կանոնակարգը, որով իսկ չի կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը:

Ավագանին չի հաստատել 2009-2012թթ. համայնքի զարգացման քառամյա ծրագիրը, որով իսկ չի կատարվել ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը:

Համայնքի 2008թ., 2009թ., 2010թ. բյուջեները, որպես նորմատիվ իրավական ակտեր չեն ներկայացվել լիազոր պետական մարմնի իրավական փորձաքննությանը և չեն ստացել պետական գրանցումներ: Հետևաբար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերը /համայնքի զարգացման ծրագիրը, ավագանու կանոնակարգը, համայնքի բյուջեն, բյուջեում կատարվող փոփոխությունները/, ինչպես նաև դրանց բացակայության, այնպես էլ առկայության /բյուջե, դրանում կատարվող փոփոխությունները/ պետական գրանցման չներկայացնելով չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջը:

Համայնքի ղեկավարի կողմից հաստատված չեն նաև

- 1/ աշխատակազմի կանոնադրությունը
- 2/ ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը
- 3/ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողների աշխատանքային կարգապահության ներքին կանոնները
- 4/ գործավարության կարգը

որոնցով իսկ չեն կատարվել ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ կետի, 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները:

Բացի այդ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված /2008-2009-2010թթ./ իրավական ակտերի՝ որոշումներ, կարգադրություններ, գերակշիռ մասը չունեն վերնագրեր, պահպանված չեն իրավական տեխնիկայի կանոնները, չունեն գործողության ժամկետներ:

Անհատական կամ /լոկալ/ ներքին ակտի նախաբաններում կամ բովանդակության մեջ պետք է նշվի թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարում է ընդունվում, որով խախտվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի, 3-րդ մասի և 3-րդ կետի, 41-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ կետերի պահանջները:

Իրավական ակտերում կատարված փոփոխությունները չեն իրականացվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով և այդ հոդվածի հիմքերով:

Մեր կողմից առաջարկվեց ավագանու նիստերը, համայնքի ղեկավարի որոշումները և կարգադրությունները ընդունել յուրաքանչյուր տարի հունվար-դեկտեմբեր պարբերականությամբ /1, 2, 3, և այլն հերթական համարակալմամբ/:

2. Համայնքային ծառայության բնագավառ

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 21-ի թիվ 205-Ա հրամանով /հավելված թիվ 1/ հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը, ըստ որի հաստատվել է

1/ աշխատակազմի քարտուղար - /1-2-1/

2/ առաջատար մասնագետ - /3-1-1/

3/ առաջին կարգի մասնագետ - /3-2-1/

/որից այսօրվա դրությամբ թափուր է առաջին կարգի մասնագետի պաշտոնը/ թափուր պաշտոնի համար տարվել է մրցույթի հայտարարություն, սակայն դիմողներ չեն եղել: Մեր կողմից առաջարկվեց հայտարարել կրկնամրցույթ:

3.01.2007թ. գյուղապետի թիվ 1 որոշմամբ հաստատվել են համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը, իսկ 29.01.2009թ. թիվ 64 որոշմամբ գյուղապետը ուժը կորցրած է ճանաչել 03.01.2007թ. թիվ 1 որոշումը և հաստատել են նոր անձնագրերը և քանի որ թիվ 64 որոշումը չի համապատասխանել ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքի պահանջներին, ուստի գյուղապետի 16.02.2009թ. թիվ 67 որոշմամբ նորից հաստատվել են համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը /որը նույնպես չի իրականացվել ՀՀ օրենքով սահմանված կարգով, այն է՝ ուժը կորցրած չի ճանաչվել թիվ 64 որոշումը/:

20.02.2009թ. թիվ 68-Ա որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել 3.01.2007թ. թիվ 1 որոշումը /սակայն ուժը կորցրած չի ճանաչվել 16.02.2009թ. թիվ 67 որոշումը/ հաստատվել են պաշտոնների անձնագրերը: Փաստորեն իրավական ակտերի ընդունման չիմացությունը հանգեցրել է ՀՀ օրենքներին չհամապատասխանող իրավական ակտերի /որոշումների/ ընդունմանը: Ի գիտություն համայնքի ղեկավարի, ավելորդ չենք համարում նշել, որ իրավական ակտերի գործողության դադարեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը իրականացվում է ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետի և 72-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին ենթակետի «բ» պարբերության դրույթներով:

Գյուղապետի 30.09.2010թ. թիվ 27 որոշմամբ փոփոխություն է կատարվել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում, նորից ուժը կորցրած չի ճանաչվել 2007թ. համապատասխան որոշումը կամ փոփոխությունը չի կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի վերոհիշյալ հոդվածների հիմքով: Նույն կարգով՝ 06.04.2009թ. թիվ 70 որոշմամբ փոփոխություններ են կատարվել նաև համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերում /ի դեպ փոփոխության ենթարկված աշխատակարգերը առկա չէին/:

29.12.2009թ. թիվ 85 որոշմամբ գյուղապետը ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի ա/ կետի դրույթով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009թ. հունվարի 20-ի թիվ 37-Ա հրամանը՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին շնորհել է ՀՀ համայնքային ծառայության 2-րդ դասի գլխավոր խորհրդականի դասային աստիճան:

Աշխատակազմի քարտուղարը ատեստավորվել է 2008թ. հունիսի 1-ին, իսկ աշխատակազմի առաջատար մասնագետը /կող՝ 3-1-1/ 2010թ. դեկտեմբերի 14-ին:

Համայնքում առկա էին ատեստավորման հանձնաժողովի արձանագրությունները, որոշումները և մյուս փաստաթղթերը:

Համայնքային ծառայողների և մյուս աշխատողների կադրային գործերի վարման մեջ տեղ գտած թերությունները /գույքի և եկամուտների հայտարարագրման մասին տեղեկանքը անձնական գործում դնելը, 6 ամսյա հաշվետվությունների եզրակացությունները և այլն/ հանձնարարվեց շտկել կարճ ժամկետում:

3. Սոցիալ տնտեսական կառուցվածքը, ենթակառուցյունները և գործավարության դրվածքը

Համայնքի տնտեսությունների թիվը 54-ն է, բնակչության թիվը 178 մարդ
<<Փարոս>> համակարգից օգտվում են 9 ընտանիք

Հաշմանդամներ են՝ 4-ը

Թոշակառուներ են՝ 8-ը

Համայնքում հասարակական սննդի, առևտրի և սպասարկման օբյեկտներ չկան, չկան նաև ֆերմերային տնտեսություններ:

Համայնքը չունի մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, չկան մարզամշակութային այլ օբյեկտներ:

Համայնքում գործում է հանրակրթական դպրոց, որտեղ սովորում են 16 աշակերտ և որտեղ աշխատում են 9 մարդ:

Համայնքը գազաֆիկացված չէ:

Աղբահանությունը իրականացվում է տարերայնորեն՝ բնակչության կողմից:

Գյուղապետարանը չունի սեփական վարչական շենք:

Չի պահպանվել նաև ՀՀ կառավարության 1997թ. թիվ 51 որոշմամբ համայնքին հատկացված սեփականության ցանկը, չի վարվում նաև հիմնական միջոցների /01/ գիրքը:

Գյուղի ներհամայնքային ճանապարհները, մոտ 6 կմ, տարիներ շարունակ չեն վերանորոգվել կամ բարեկարգվել:

Միջհամայնքային ճանապարհները /Սոթք-Ազատ/ մոտ 3 կմ գտնվում է անբարվոք վիճակում:

Խմելու ջուրը ստացվում է սարերից՝ ինքնահոս կերպով /մոտ 2 կմ/, իսկ գյուղամիջյան խմելու ջրի ներքին ցանցի /3կմ/ մեծ մասը վերանորոգվել է 2003թ., սակայն խմելու ջուրը չի բավարարում համայնքին:

Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ և հողագործությամբ:

Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 262-ն է

մանր եղջերավորների՝ 342-ը

թռչուններ՝ 474 թև, 160 մեղվաընտանիքներ:

Համայնքը չունի վերգետնյա ոռոգման ցանց /ոռոգման ջուր որոշ ընտանիքների մղվում է խորքային հորից/:

Փաստորեն ներհամայնքային ուղիները, խմելու ջրի, ոռոգման ցանցի նորոգման, բարեկարգման, սանիտարական մաքրման և համայնքի կանաչապատման աշխատանքներ տեղեկան ինքնակառավարման մարմնի կողմից

ի դեմն համայնքի ղեկավարի չեն կատարվել որով չեն կատարվել <<Տերապևտիկ հնքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 10, 11, 12-րդ կետերի և 44-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները /որպես պարտադիր լիազորություններ/:

Գործավարությունը

Համայնքում առկա է վերադաս և այլ կազմակերպություններից ստացված գրություններ մուտքի և ելքի մատյաններ, որոնցում վարվում է նաև քաղաքացիներից դիմումների ստացումը և ելքը:

2009թ. մուտք է եղել 16 գրություն:

2010թ. - 13-ը

2011թ. - 11-ը

Գյուղապետարանից ելքագրվել է՝

2009թ. - 30-ը

2010թ. - 75-ը

2011թ. - 7-ը գրություններ և պատասխաններ:

Գործավարության մեջ տեղ գտած թերությունները արգասիք են գործավարության կարգի բացակայության, որի համար մեր կողմից առաջարկվեց մշակել, հաստատել և գործողության մեջ դնել վերոհիշյալ կարգը, կարճ ժամկետում վերացնել տեղ գտած թերությունները:

Միաժամանակ հաստատել և գործողության մեջ դնել ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը /հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից հաստատված օրինակելի կարգը/:

4. Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսական բնագավառում

Ազատի համայնքում, տարիներ շարունակ, թերակատարվել են ինչպես սեփական եկամուտների, այնպես էլ ընդամենը եկամուտների պլանային առաջադրանքները, որոնցից համագանաբը, ադր թվում, թույլ չի տալիս ձեռավորելու ֆոնդային բյուջե: կամ լուծելու համայնքային նշանակության որևէ հիմնախնդիր: Եկամուտների շարունակական թերակատարման պատճառով համայնքում տարեցտարի կուտակվել են աշխատավարձի հոդվածով հսկայական պարտքեր, որոնք 2009թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 8190.0 հ/դրամ; Եվ միայն հաստիքային միավորների կրճատման ու դրույքաչափերի իջեցման շնորհիվ է, որ 2009թ. նախորդ տարիների պարտքերից մարվել է 745.0 հ/դրամ, 2010թ.՝ 1645.0 հ/դրամ աշխատավարձի պարտքեր և դրանք 2011թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 5000.0 հ/դրամ:

Բերենք համայնքի 2009-2010թթ. և 2011թ. փետրվարի 1-ի դրությամբ բյուջեների եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվական տվյալները.

Եկամուտները	2009թ.			2010թ.			2011թ.		
	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%	պլան	փաստացի	%
Գույքահարկ	71.6	30.6	43.1	23.9	47.0	196.7	23.9	-	-
Հողի հարկ	1195.3	1176.6	98.8	1084.8	1056.5	97.4	1524.7	-	-
Հողի վարձավճար	3266.5	2502.9	77.2	2557.8	2186.2	85.5	2046.9	-	-
Ընդ. սեփ. եկամուտներ	4533.4	3710.1	82.1	3666.5	3289.7	89.7	3595.5	-	-
Պատ. լիազորույթ.	729.6	729.6	100.0	-	-	-	-	-	-
Դոտացիա	2000.0	2000.0	100.0	3500.0	3500.0	100.0	3500.0	291.7	8.3
Ընդամենը եկամուտներ	7363.0	6439.7	88.7	7166.5	6789.7	94.8	7095.5	291.7	3.8
Ընդամենը բյուջետ. ծախսեր	7787.9	6174.6	79.3	7166.5	6394.9	89.2	7095.5	-	-
Ս/թ	3003.1	2645.0	88.1	3864.0	3620.9	93.7	3960.0	-	-
4111 աշխատավարձ	2402.0	1748.0	72.8	983.5	916.0	93.1	893.5	-	-
4131 սոցվճար	100.0	16.0	16.0	100.0	58.0	58.0	100.0	-	-
4212 էլ.էներգիա	100.0	71.0	71.0	100.0	-	-	50.0	-	-
4214 կապ	55.0	-	-	-	-	-	-	-	-
4216 գույք և սարք.	75.0	-	-	-	-	-	100.0	-	-
4221 գործուղում	170.0	120.0	70.6	150.0	135.0	90.0	120.0	-	-
4822 այլ հարկեր	20.0	-	-	20.0	-	-	30.0	-	-
5113 շահույթ. կապ.վերանորոգում	100.0	-	-	100.0	-	-	-	-	-
4729 այլ նպ.բյուջեի	80.0	-	-	100.0	20.0	20.0	100.0	-	-
4234 տեղեկ.ծառ.	-	-	-	20.0	-	-	20.0	-	-
պահուստ.ֆոնդ	100.0	-	-	100.0	-	-	100.0	-	-
							-	-	-
Ն.տ.պ.	753.2	745.0	98.9	1729.0	1645.0	95.1	1432.0	-	-
4111 աշխատավարձ	100.0	100.0	100.0	-	-	-	-	-	-
4131 սոցվճար	592.8	592.8	100.0	-	-	-	-	-	-
Անասնաբույժ	136.8	136.8	100.0	-	-	-	-	-	-
4111 աշխատավարձ									
4131 սոցվճար									

Համայնքի 2009թ. տարեկան ճշտված բյուջեով եկամուտներ է նախատեսվել 7363.0 հ/դրամ, փաստացի տարվա ընթացքում հավաքագրվել է 6439.7 հ/դրամ կամ պլանը կատարվել է 88.7%-ով: Բյուջեով նախատեսված 7787.9 հ/դրամ ծախսերի դիմաց, ըստ հաշվետվության, փաստացի ծախսերը կազմել են 6174.6 հ/դրամ կամ փաստացի ծախսերը կատարվել են 79.3%-ով: Ըստ որում աշխատավարձի և սոցվճարի հոդվածներով ծախսերը փաստացի ծախսերում կազմել են 96.7%:

Նշենք, որ ընթացիկ տարվա աշխատավարձի և սոցվճարի հաշվարկային գումարները բյուջեում ճիշտ չեն ցույց տրվում: Բանն այն է, որ ավագանու կողմից

հաստատված հաստիքացուցակով հաստատվել է 5 ~~որոշակի մեկուկուր~~ /գյուղապետ, տեղակալ, քարտուղար, հաշվապահ, ֆինանսիստ/, որտեղ հունվարից ապրիլ ամիսներին հաշվարկվել է ~~ամսական~~ հ/դրամ և մայիս-դեկտեմբեր ամիսներին՝ 260.0 հ/դրամ, որը 2009թ. հաշվարկով կազմում է 3580.0 հ/դրամ, այն դեպքում, երբ ծախսային մասում աշխատավարձի պլանային գումարը ցույց է տրված 3003.1 հ/դրամ: Սոցվճարի հոդվածով հաշվարկային գումարը ցույց է տրված 2402.0 հ/դրամ, որը կազմում է ցույց տրված 3003.1 հ/դրամ աշխատավարձի ուղիղ 80%-ը, այն դեպքում, երբ իրականում հաշվարկված 3580.0 հ/դրամ աշխատավարձի համար, հաշվարկվում էր 909.8 հ/դրամ սոցվճար:

Բացի այդ, աշխատավարձի կանխիկ գումարների սոացման ցուցակներում ընթացիկ տարվա և նախորդ տարիների պարտքերի դիմաց վճարումները իրարից տարանջատված չեն: Վճարման ցուցակներից ոչ մեկը լրիվ ամսվա վճարում չէ, այլ դրանք իրենցից ներկայացնում են կանխավճարային /ավանս/ վճարումներ, սակայն որպես այդպիսիք չեն հաշվառվել: Վճարման ցուցակներից չի երևում, թե դրանք որ տարվա, որ ամիսների համար են կատարված, կամ դրանք նախորդ տարիների պարտքեր են, թե ընթացիկ տարվա վճարումներ: Չկան նախորդ տարիների պարտքերի ամփոփ ցուցակներ և հնարավոր չեղավ ստուգել պարտքերի արժանահավատությունը:

2009թ. բյուջեում, ծախսային մասում, նախորդ տարիների սոցվճարի պարտքը ցույց է տրված 100.0 հ/դրամի չափով, որը մարվել է 2009թ. ընթացքում: Այդ դեպքում, ընթացիկ տարվա 909.8 հ/դրամ սոցվճարի հաշվարկայինի դիմաց ինչու է փոխանցվել 1748.0 հ/դրամ / իրականում, վճարման հանձնարարագրերով, սոցվճար է փոխանցվել 1748.0 հ/դրամ/, պարզ չեղավ: Եթե տարբերությունը նախորդ տարիների սոցվճարի պարտքեր են, ապա հաշվետվության մեջ պետք է ցույց տրվեր համապատասխան տեղում, ինչը չի արված:

Համայնքի 2010թ. տարեկան ճշտված բյուջեով եկամուտներ է նախատեսվել 7166.5 հ/դրամ, փաստացի տարվա ընթացքում հավաքագրվել է 6789.7 հազար դրամ կամ պլանը կատարվել է 94.8%-ով: Բյուջեով նախատեսված 7166.5 հ/դրամ ծախսերի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 6394.9 հ/դրամ կամ փաստացի ծախսերը կատարվել են 89.2%-ով, ընդ որում աշխատավարձի և սոցվճարի հոդվածներով կատարված ծախսերը կազմել են փաստացի ծախսերի 97.6%-ը: Աշխատավարձի ընթացիկ տարվա և նախորդ տարիների պարտքերի վճարումները տարանջատված չեն, միայն ծախսերի վերաբերյալ հաշվետվությունում է ցույց տրված 3620.9 հ/դրամի ընթացիկ վճարումներ և 1645.0 հ/դրամի նախորդ տարիների պարտքեր: Նախորդ տարիների պարտքերը ըստ պահանջատերերի չկան, և վճարումների արժանահավատությունը հնարավոր չեղավ ստուգել: Ինչպես 2009թ., այնպես էլ 2010թ. վճարումների ցուցակներից չի երևում, թե դրանք որ տարվա, որ ամսվա պարտքեր են կամ 2011թ. հունվարի 1-ի դրությամբ կուտակված /ըստ իրենց կողմից ներկայացված հաշվետվության/ 5800.3 հ/դրամի պարտքերը ում պետք է վճարել կամ յուրաքանչյուրին՝ որքան: Նշենք, որ 2011թ. բյուջեով նախատեսվել է նախորդ տարիների պարտքերից վճարել 1432.0 հ/դրամ: 2010թ. ԴԱՀԿ-ի վճույք, գյուղապետարանի հաշվից գանձվել և ինչ որ քաղաքացու պարտքերի դիմաց, որպես աշխատավարձ, վճարվել է 391.8 հ/դրամ գումար: 2011թ. սոցվճարի հաշվարկները ճիշտ են կատարվել:

2011թ. բյուջեով նախատեսվել է 7095.5 հազար դրամի եկամուտներ, նույնքան էլ ծախսեր: Ընդ որում, հունվար ամսին մուտք է եղել միայն պետբյուջեից ստացված 291.7 հազար դրամ դոտացիա և ոչ մի սեփական եկամուտ չի հավաքագրվել ու մուտք չի եղել համայնքի բյուջե: Հունվար ամսին չեն կատարվել ոչ մի տեսակի ծախսեր:

Համայնքում հողի հարկի տարեկան հաշվարկային գումարը կազմում է 690.4 հ/դրամ: 2009-2011թթ. բյուջեներում հաշվարկայինից ավել սահմանված գումարները նախորդ տարիների հողի հարկի ապառքներ են: Գույքահարկի տարեկան հաշվարկային գումարը կազմում է 23.9 հ/դրամ, իսկ հողերի վարձավճարներինը՝ 1846.9 հ/դրամ: Բյուջեներում հաշվարկայինից ավել սահմանված գումարները նախորդ տարիների ապառքներ են:

Համայնքում հաշվապահական հաշվառում սահմանված կարգով չի իրականացվել: Չի կիրառվել սկզբնական փաստաթղթերի տվյալների հավաքագրման, գրանցման և ընդհանրացման համակարգը, չի տարվել կատարված գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառում: Չեն բացվել հաշվապահական հաշիվներ, չեն կազմվել շրջանառության տեղեկագրեր, հաշվառումը չի վարվել մեմորիալ-օրդերային կամ կրկնակի գրանցման եղանակով: Չի վարվել գլխավոր գիրք, սկզբնական տվյալները չեն ընդհանրացվել և չեն գրանցվել գլխավոր գրում: Աշխատավարձի հաշվարկման համար չեն պահանջվել տարբեր, գրանցված չեն աշխատողներին հաշվարկված և փաստացի վճարված գումարները, ըստ ֆիզիկական անձանց ձևակերպված չեն աշխատավարձերի պարտքերը, վճարումները չեն ստացել համապատասխան գրանցումներ:

Խախտելով սահմանված կարգը, մարզպետարանին չեն ներկայացվել համայնքի բյուջեների կատարողականների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները՝ սահմանված ծավալով և հատվածներով:

5. Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Գեղարքունիքի մարզի Ազատ համայնքը ունի գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի հետևյալ հաշվեկշիռը.

Հողատեսքեր	ընդամենը	քաղաք. սեփ.	համայնք. սեփակ.
Վարելահող	464.37	82.87	381.5
Խոտհարք	13.32		13.32
Արոտավայր	279.82		279.82
Պլ. հողատեսք.	36.95		36.95
Ընդամենը	794.46	82.87	711.59
Բնակելի	25.64	20.71	4.93
տնամերձ	20.71	20.71	

Համայնքային 381.5 հա վարելահողերից կադաստրային պետական գրանցում ունեն 261.75 հա, այն կազմում է համայնքային վարելահողերի 68.6%-ը: 13:32 հա խոտհարքների համար չկան վարձակալական պայմանագրեր, իսկ արոտավայրերը օգտագործվում են համայնքի բնակիչներին պատկանող 188 գլուխ պայմանական խոշոր եղջերավոր անասունների կողմից:

Վարձավճարի մասով 2009թ. պլանային 3266.5 հազար դրամի եկամտային մասը կազմել է 77.2% կամ մուտքագրվել է 2502.9 հազար դրամ: 2010թ. պլանային 2557.8 հազար դրամի դիմաց եկամտային մասը կազմել է 2186.2 հազար դրամ կամ 85.5%: Հողատեսքի վարձակալության մրցույթների անցկացման համար 2009թ. և 2010թ վարձակալական մրցույթների անցկացման հայտարարություններ չի տրվել: Հողի վարձավճարի գծով ապառքները կազմում ~~...~~ հազար դրամ:

Հողի հարկի մասով

Հողի հարկի մասով համայնքի ելակետային թիվը 690.4 հազար դրամ է: 2009թ. բյուջեով նախատեսված 1195.3 հազար դրամի դիմաց մուտքային մասը կազմել է 1176.6 հազար դրամ կամ 98.8%: 2010թ. պլանային 1084.8 հազար դրամի դիմաց մուտքային մասը կազմել է 97.4% կամ 1056.7 հազար դրամ: 2011թ. փետրվարի 11-ի դրությամբ պլանային 1533.7 հազար դրամից չի մուտքագրվել ոչ մի դրամ:

Համայնքում հողի հարկի ապառքները տույժերի հետ միասին կազմում է 5100.0 հազար դրամ:

2009-2011թթ. համայնքում բնակավայրի և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի օտարում աճուրդ վաճառքի միջոցով չի կատարվել:

2009թ. մինչև 11.02.2011թ. վարձակալության մրցույթների հայտարարություններ չի տրվել, ~~...~~ հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջները:

Կից ներկայացվում է հողօգտագործման մասին տեղեկատվությունների հարցաթերթիկը:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Առաջարկել մարզի Ազատ համայնքի ղեկավարին՝






1. Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի, 1-ին ենթակետի <<բ>> պարբերության դրույթներով ուժը կորցրած ճանաչել գյուղապետի 15.01.2009թ. թիվ 62, 15.05.2010թ. թիվ 15, 08.12.2010թ. թիվ 31 որոշումները և 18.05.2010թ. թիվ 11 կարգադրությունը:
2. Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի դրույթով այսուհետ համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել գույքագրումների արդյունքները:
3. ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում և կարգով ՀՀ արդարադատության նախարարության պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ներկայացնել ավագանու և գյուղապետի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը /համայնքի բյուջե, բյուջեում կատարվող փոփոխությունները, ավագանու կանոնակարգը, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը և այլն/:
4. Ի կատարումն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ կետերի և 32-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների հաստատել և գործողության մեջ դնել՝
 - 1/ համայնքի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունը.
 - 2/ ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը
 - 3/ աշխատակազմի աշխատողների աշխատանքային ներքին կարգապահության կանոնները
 - 4/ գործավարության կարգը
5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ մասի, 3-րդ կետի և 41-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներին.
6. Իրավական ակտերի մեջ փոփոխությունները կամ լրացումները իրականացնել <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների հիմքով:
7. Միջոցներ ձեռնարկել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 10, 11, 12-րդ կետերով և նույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների կատարման ուղղությամբ:
8. Համայնքային ծառայության թափուր պաշտոնը համալրել մրցութային եղենակով կամ ավագանու քննարկմանը ներկայացնել այդ պաշտոնը համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից հանելու նպատակահարմարության հարցը:
9. Հաշվապահական հաշվառումն իրականացնել <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, այն է՝ կազմել շրջանառության տեղեկագրեր, կատարել գործառույթների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառում, լրացնել պահանջվող ռեկվիզիտները: Սահմանված ժամկետներում և կարգով մարզպետարան ներկայացնել

եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ ամսեկան և տարեկան հաշվետվությունները:

10. Համայնքային սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրել ՀՀ հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

Առաջարկություն – առաջարկվում է տեղեկանքը քննարկել մարզպետի նիստում, ընդունել համապատասխան որոշում և առաջարկել համայնքի ինքնակառավարման մարմիններին միջոցներ ձեռնարկել սեղմ ժամկետում վերացնելու տեղ գտած թերությունները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ:

	Ի. ԱՍԱՏՐՅԱՆ
3 ^{րդ} թիվ	ՅՈՒ. ԹԱԹԱՐՅԱՆ
	Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
	Հ. ՕՀԱՆՅԱՆ
	Վ. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ
	Վ. ՊՈՂՈՍՅԱՆ